

Նորայր Բ. Պողոսյան
Բանաս. գիտ. թեկնածու

17-18-ՐԴ ԳԱՐԵՐԻ ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅ ԲԱՐՔԱՌԸ

Բառապաշարային և քերականական անդրադարձ*

Մուտք

Հայ-հունգարական առնչությունները դարերի պատմություն ունեն: Հունգարիայում (ուշ միջնադարյան հայերենում՝ Մաճառստան, Մաջար) հայերի հայտնվելու մասին հիշատակներ, այդ թվում՝ հունգարական աղբյուրներում, հանդիպում են դեռևս 10-11-րդ դարերից՝ Կեյզա դուքսի (972-995), Ստեփանոս Մուրք թագավորի (997-1038) ժամանակներից: Իբրև գաղթականներ հայերը Հունգարիայում մեծ արտոնություններ են ստացել Լադիսլավ Գ թագավորի օրոք (13-րդ դ.):

Եվրոպայում հայկական հնագույն գաղթավայրերից մեկը հիմնադրվել է Տրանսիլվանիայում: Այս երկրամասը միջնադարում եղել է Հունգարիայի կազմում, ուշ միջնադարում ինքնավարություն է ունեցել, ապա նորից կցվել է Հունգարիային, իսկ 1921 թվականից մտել է Ռումինիայի կազմի մեջ: Անիից գաղթած հայերից սերած մոտ 3000 ընտանիքներ 16-րդ դարի կեսերին Մոլդովայից տեղափոխվել են Տրանսիլվանիա: 1671 թ. Մոլդովայի Գեորգ Գ-ուզան իշխանի ու միաժամանակ՝ կաթոլիկ-լեհական հալածանքներից խույս տալով՝ Մուչավայի հայերը ևս գաղթել են Տրանսիլվանիա և հիմնել Գերլա հայաքաղաքը (Armenierstadt)¹: Տեղի իշխանության մի շարք որոշումներով (այդ փաստաթղթերի մի մասը պահպանվել է) հայերին տրվել են առևտրով, արհեստներով զբաղվելու իրավունքներ, հատուկ որոշումներով նաև՝ դատական, հոգևոր-կրթական ներքին ինքնավարություններ: Հայերն այստեղ հռչակված էին իրենց արհեստներով, հատկապես կաշեգործությամբ:

Եղիսաբեթուպոլիսում (ներկայումս՝ Դումբրեվենի, Ռումինիա) հայերը հաստատվել են 1658 թվականից, ուր 1696 թ. նրանց շնորհվել են դատական, առևտրական իրավունքներ, 1733-ից նաև՝ ինքնավարություն: 19-րդ դարից այստեղի հայկական գաղթավայրն սկսում է անկում ապրել, թեև այժմ էլ, ի դեպ, այնտեղ կան ծագումով հայ ընտանիքներ²:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.04.2012:

¹ Տե՛ս Լեւոն Բաբայեան, Գայերը Մոլդաւիայում և Բուքովինայում (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), Թիֆլիս, 1911, էջ 226:

² Առավել մանրամասն տե՛ս «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից (հոդվածների ժողովածու)», Եր., 1983: Տե՛ս նաև՝ «Հայ Սփյուռք», Եր., 2003, էջ 379-381, 444-445:

Գ (Ժ) քարտե, թիվ 2 (38) ապրիլ-հունիս, 2012

վեյ համահայկական հանդես

Ուստի 17-18-րդ դարերում Եղիսաբեթուպոլսի հայերի միջավայրում ստեղծված բնագրերի հիման վրա փորձենք ցույց տալ, թե ի՞նչ էր իրենից ներկայացնում հունգարահայ բարբառն այդ ժամանակաշրջանում, և տվյալ միջավայրում ինչ-պիսի՞ բնույթ ունեին եվրոպական լեզուների, այս դեպքում՝ հունգարերենի հետ հայերենի շփումները:

1. 17-18-րդ դարերի հունգարահայ բնագրերի արժեքը

Եղիսաբեթուպոլսի հայկական միջավայրում 17-18-րդ դարերում գրված բազմաթիվ փաստաթղթերի (առևտրական գրագրություններ, դատական որոշումներ և այլն) հիմա վրա Գրիգոր Գովրիկյանը ժամանակին հրատարակել է «Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ» արժեքավոր երկը³: Գ. Գովրիկյանը հունգարահայերին նվիրված այս աշխատության «Յառաջաբանում» գրում էր, որ ինքն օգտագործել է «ղիւանական արձանագրութիւններ, պաշտօնական գրուածքներ և տարեգրոց յիշատակարաններ»: Հայերենի պատմության համար մեծ բարեբախտություն է, որ նշված երկում հրատարակվել են 17-18-րդ դարերում գրված բազմաթիվ բնագրեր, որոնք անխառն կերպով արտացոլում են ուշ միջնադարում տեղի հայության խոսվածքը: Հունգարահայերի խոսվածքի առանձնահատկությունների մասին մեր հոդվածը մեծապես հիմնված է հենց այդ «ղիւանական արձանագրութիւնների» վրա:

Հունգարահայ բարբառի մասին գիտական առաջին անդրադարձը պատկանում է Հրաչյա Աճառյանին: Իր բարբառագիտական ուսումնասիրության մեջ⁴ նա նկարագրել է Ավստրո-Հունգարիայի հայոց բարբառի հնչյունական, քերականական առանձնահատկությունները: Ավելի ուշ ականավոր լեզվաբանը նշված խոսվածքը ուսումնասիրել է «Սուչավայի բարբառ» անվան տակ: Հ. Աճառյանը ներկայացրել է նաև կոնկրետ նմուշներ այդ բարբառից, որոնց մեջ առկա են ռումիներեն, գերմաներեն, հունգարերեն, լեհերեն բազմաթիվ բառեր, օրինակ՝ **նումայ** – ռումին. *numai* «միայն թե», **աժուդոր** – ռումին. *ajutor* «օգնական», **մուզիգ** – գերմ. *musik* «նվագ», **սոլ** – լեհ. *stol* «սեղան», **բիքա** – հունգ.-լեհ. «տիկին» և այլն:

Պետք է նշել, որ ի տարբերության հայկական շատ այլ գաղթավայրերի, հունգարահայ գաղթօջախի մեջ մտնող Տրանսիլվանիայի հայերը ժամանակին կարողացել են պահպանել իրենց գրագրություններն ու դիվանական փաստաթղթերը: Դա նկատի ունենալով է, որ իր հրատարակած փաստաթղթերի մասին Գ. Գովրիկյանը հայտնում է հետևյալը. «Եղիսաբեթուպոլսոյ ազգայինք ճանաչման ու գովութեան արժանի են, որ **այսչափ պաշտօնական կարևոր գրութիւններ կրցած են պահել մինչև ցայսօր: Մեծ արթնութիւն**, քաղաքաբաշխութեան մեծ ճիգ արժած պէտք է որ ըլլայ զատոնք պահպանելն ու ներկայ վիճակի մէջ պահելը»⁵: Ըստ որում հրատարակիչը փաստաթղթերի մի մասը քաղել է քաղաքային արխիվից, մի մասն էլ՝ մասնավոր անձանց մոտ պահվող գրություններից, որոնք Գ. Գովրիկյանն անվանում է «տոհմային պատմութիւններ»:

Չի կարելի ասել, որ ուշ միջնադարում հայերենի բարբառների մասին գրավոր

3 Տե՛ս Գրիգոր Գովրիկեան, Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ, Վիեննա, 1893:

4 Տե՛ս Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911:

5 Գ. Գովրիկեան, նույն տեղում, էջ է:

վկայությունները շատ են: Պահպանվել և հրատարակվել են, օրինակ՝ Ջուդայի, Ագուլիսի, Աստրախանի, Կ.Պոլսի բարբառներով գրված բնագրեր (խոսքը զուտ բարբառային բնագրերի մասին է, և ոչ թե՝ բարբառախառն աշխարհաբարի): Այդ տեսակետից Գ.Գովրիկյանի հրատարակած նյութերը մեծ կարևորություն են ստանում. դրանք անխառն աղբյուր են 17-րդ դարում հայերենի տարածքային մեկ միավորի՝ հունգարահայերի բարբառի ու բնականաբար՝ այդ բարբառով խոսող հայերի կենցաղի, մշակույթի, տնտեսական կացության և հարաբերությունների մասին:

Բնագրերը հունգարահայերի իրավական կարգավիճակի մասին տեղեկություններ և այլ փաստեր պարունակելուց զատ, մեծ նյութ են ամբարում նաև տեղի հայերի խոսվածքի առանձնահատկությունների, եվրոպական լեզուների և առաջին հերթին՝ հունգարերենի հետ հայերենի այս հատվածի ունեցած առնչությունների, ի վերջո՝ հայոց լեզվի վաղաշխարհաբարյան շրջանի պատմության մասին:

Հայերենի, հատկապես Եվրոպայում սփռված բարբառներին գգալի թվով եվրոպական փոխառություններ են անցել ուշ միջնադարում: Կ.Պոլսի, Ջմյուռնիայի բարբառների հետ մեկտեղ եվրոպական փոխառություններ են հանդիպում անգամ Հայաստանի համեմատաբար խորքում գտնվող բարբառներում, ինչպես օրինակ՝ Ակնի բարբառում՝ **էճինէ, ընկեւա, իստիքա, թէլիկոսի** (ոսկերչական գործիքների անուններ են), Վանի բարբառում՝ **քոնմպաթա** (գինվորական թմբուկ), **կումանդար** (ղեկավարող), **կումփանյա** (ընկերություն): Եվրոպական բառեր են թափանցել անգամ հեռավոր Ղարաբաղի բարբառում՝ **սընդըլէա** (աթոռ), **բօլթա** (պտույտ) և այլն: Հ.Աճառյանը հաշվել է մման մոտ 860 փոխառություն⁶: Պետք է մատնանշել, որ մեր բարբառները բաց են եղել քաղաքակրթական նորամուծություններն ընդունելու և ըստ այդմ՝ համապատասխան բառը փոխառելու հարցում:

Եթե Եվրոպայից հեռու հայերի լեզվում գործածվում էին մման փոխառյալ բառեր, ապա հասկանալի է, որ առավել մեծ էր փոխառությունների հավանականությունը բուն Եվրոպայում տարածված հայ բարբառներում, ինչի օրինակը հունգարահայերի խոսքն էր:

Ուստի փորձելով ի մի հավաքել Տրանսիլվանիայի հայերի դիվանական փաստաթղթերում հանդիպող փոխառությունները, նախ՝ ներկայացնենք հունգարական ծագման բառերը, որոնք ամենամեծ թիվն են կազմում, ապա և մի փունջ՝ եվրոպական այլ լեզուներից կատարված փոխառություններից: Հայերենին անցած այդ բառերն իրենց բովանդակությամբ ընդգրկում են քաղաքականության, մշակույթի, տնտեսության և առանձնապես արհեստագործության լայն ոլորտները: Պետք է վստահաբար ասել, որ մման բառերի վերհանումը ժողովուրդների մշակութային փոխշփումների և հատկապես լեզվի զարգացման ու հարստացման պատմության քննության համար ունի կարևոր նշանակություն:

Բառերը ներկայացնում ենք բնագրերում հրատարակված տառադարձությամբ՝ անխաթար պահելու համար 17-րդ դարում ընդունված հնչյունական օրինաչափությունները, չնայած շատ դեպքերում, պարզ է, որ բնագրային տառադարձումները չեն համապատասխանում ներկայիս գիտական չափանիշներին, և ընդհանուր առմամբ է միայն հնարավոր լինում պատկերացում կազմել հնչյունա-

6 Տե՛ս Եվրոպական լեզուներից հայերենի բարբառների կատարած փոխառությունների մասին տե՛ս **Յ.Աճառեան**, Եւրոպական փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Վիեննա, 1951:

կան առանձնահատկությունների մասին: Նկատելի է նաև, որ հրատարակիչը աշխատել է հնարավորինս հարազատ մնալ փաստաթղթերում արձանագրված ուղղագրությանը, սակայն կան նաև անհետևողականության որոշ դեպքեր. հաճախ միևնույն բառը տարբեր փաստաթղթերում տպագրվել է տարբեր ուղղագրություններով՝ **հինգ-հինկ**, **հանգստութիւն-հանգստութիւն**, **ստակ-սղակ** և այլն: Սակայն գուցածն գրություն ունեցող բառերի թիվը մեծ չէ:

Հատկանշական է, որ Հ.Աճառյանը հունգարերեն բառեր է գտել անգամ Կ. Պոլսի բարբառում. **հայտուտ** (վիթխարի), **հեօտիք** (բիրտ), **փալասկա** (փամփշտակալ), որոնք, սակայն, ինչպես գրում է լեզվաբանը՝ «ամեն պարագայի մէջ մենք փոխ առած ենք թուրքերենէ և ուղղակի հունգարացոց հետ գործ չունինք»⁷:

Ներկայացնենք մի հատված հունգարահայերի վերաբերյալ Գ.Գովրիկյանի հրատարակած արխիվային փաստաթղթերից, որոնցում հստակ երևում է փոխառությունների առատությունը. «Ունենան **աղաչայ ինքբեգորներն** ամեն շաբթու, այսինքն՝ չորեքշաբթին **տօմինալի ֆօրում** (ատյան, դատաստան) բրնձլու ու զամենայն **գօնորոյվերգիաներն** (վեճ, խնդիր) խոփելու»⁸, «Տէր Սիմասըն՝ արաքելական **միսիօնար** եւ **վէներապիլէ գաբիդուլումին արքուալիս գանօնիզուս**, ըզվերոյ ասացեալ **սիշգրեցիան րէբրէզէնդօվադ** անելու...»⁹ և այլն:

2. Հունգարերենից տեղի հայերին անցած բառեր

Ստորև ներկայացված են մեր կարծիքով՝ ստույգ փոխառություն դիտվող այն բառերը, որոնք ստուգաբանվում են հունգարերենով: Բնագրերում հանդիպող հայատառ հունգարերեն բառերը համեմատել ենք ռուսերեն-հունգարերեն և անգլերեն-հունգարերեն բառարանների տվյալների հետ¹⁰:

ԱԼԳՕԼ – հունգ. *alkal.* - միջնորդությամբ, շնորհիվ, այստեղ՝ կոմսի (կրօֆին) միջնորդությամբ. «կու տեսնունք, որ այս բանս կրօֆին արթօլ պետք է որ վերջանայ» (155)¹¹:

ԲՕՇԳԱ ՍԷՇԳԷՐ – հունգ. *postamester.* - փոստապետ, գյուղական փոստի պետ, «ըզԱղաչայ Լուսին Թորոսեան դրրանք բօշղայ մէշդէր, օր ունէնայ հրամայելու դըլնաճի աղաչանուն դուս (107):

ԳԻՐԱՅԼԻ ՎԱՐՕՇ – հունգ. *királyi város.* - արքունական քաղաք. «Եփօր դարնա մեր քաղաքը գիրայլի վարօշ, նա չունի պարտականութիւն ազատութեանը գօրա» (194):

ԳԻԿԻԻՇ - հունգ. *kötés.* - կապ, հանգույց. «ամենեւին մէկ հազըսդէդէնուն վերայ արծրթէ ոսգու զարդարանքներ չի գըտվի, ոչ գիւղիւշ, ոչ չիբգայ, ոչ բօռդիշբան, ոչ բասամանը, ոչ ֆրանձըլ» (45):

ԳՈՒԲԱ - հունգ. *kupa.* - գավաթ, չափի միավոր «գիտացվի օր տվանք ըզըրախիս արընտայօվ Աղաչայ Ծարուկին ասցուան, մէկ տարօվ, որ ինքը ծախսէ գուրով ալ եւ վատրայով ալ եւ ընդօր ուզենայ (100):

7 **Յ.Աճառեան**, նշվ. աշխ., էջ 11:

8 **Գ. Գովրիկեան**, նույն տեղում, էջ 67:

9 **Գ. Գովրիկեան**, նույն տեղում, էջ 70:

10 Հունգարերեն բառերը ճշտելու համար հիմք ենք ընդունել նախ և առաջ հետևյալ բառարանները. Венгерско-русский словарь (40000 слов), ред. Ласло Гальди, Москва-Будапешт, 1987. English to Hungarian Dictionary, <http://www.freedit.com/ondict/hun.html>.

11 Փակագծերում բերված են Գ. Գովրիկյանի նշված աշխատության համապատասխան էջերը:

ԳՐՉԱՄՅ – հունգ. koresma.- գինետուն, պանդոկ «որն որ զքաղաքն կի կարավարին, նայ ունենայ Ա գրչմամն բրռնելու» (58):

ԳՕԶՕԸ – հունգ. közös.- ընդհանուր, այստեղ՝ ընդհանուր, համայնքային քաղաք. «մեր քաղաքացիքը հիվոր գոգոշ քաղաքը ներս մտնելու ու ան քաղաքն ալ պարտական ըլա նես առնելու» (195):

ԳԱՊԼԱՆ – հունգ. tábla.- այստեղ՝ բարձրագույն ատյան. «գաւուգա չերթա մեր դատաստանէն գրմարն, հապա երթա դապլան կամ կուպէրնիումը» (194):

ԳԸԿԵՏՈՒԻԳ ԱՆԵԼ – հունգ. tagadni.- մերժել, ուրանալ «հապա դրկըտտիդ կու անէր թէ չէ քալուցիլ» (51):

ԳԻՍԳՈՒԹԻԻՆ – հունգ. tiszt.- պաշտոնյա, սպա բառից, այստեղ՝ իրավասութիւն. «վօժօր քայլցնու նատ բացայ (հունգ. եղեգյա գավագան^ո), նայ պիտոր ունենայ դիտութիւն, այսինքն ընտօր պիրօվն ու աղաներն ու նօդարիշներն ու սարըղան ... հոս քաղքին մէջ ունենան քայլցնելու» (30):

ԵՕՊԱՆ – հունգ. jobbagi.- ճորտ, անվճար ծառայող. «ե գիտացվի, որ եօպանմուն մօտէն չի առնու տաղմայ» (103):

ԼԱՆՅ – հունգ. lancz.- շղթա. հրատ. մեկնաբանում է այսպէս՝ «նշանակութիւնը պիտ'որ ըլլայ անտարակոյս, դաշտին մէջ մէյ մէկ կտոր երկիր, գոր հին ատեն շղթայով կը չափէին». «ե ըզԱղաչայ Մանուկն Իսիգուցեանց դրրանք վէքիլ ըրթին վրայ, այսինքն խոտանցիկը եւ լանցիկը ըրթին բոլորը» (105-106):

ԼԷԿՕԼԱՊ – հունգ. legalább.- առնվազն. «ալ քիչ քան 20 բէրսօնայ ներկայ չի գտվի, որ լէկօլապ քըսան հօգի ըլան խորհուրդին մէջ» (363):

ԿԻԼԱՊՏՈՆ – հունգ. «սիրմայէ, կիլապտոնէ կոճակ հագստէղէնուն վերայ չի դրվի» (47):

ԿՐՕԸ – հունգ. garas.- գրոշ, մանրադրամ. «չի հնագանդողն ինչխար 1/4 սահդեն (°) օր ուշացվէր, մէկ մէկ կրօշ ճուրում պի տայ (33):

ՀՕՐԲՈՒԳԸՐ – ըստ հրատարկողի՝ հունգ. haj.- «մազ» + ֆրանս. poudre «փոշի» բառերից. «այսուհետեւ կու արգիվի, օր ամենեւին հեջ (°) մարդու տղի գլխոց վերայ ալ հօրբուրդը չի գրտվի ... լանձուգ և գարդարանք գլխուն վրայ ամենեւին չի գրտվի» (49):

ՄԵՆԳԷՅ – հունգ. mente.- կրկնոց. «ոչ այս երկրին մէջ եւ ոչ օգկայ երկիր չի գրտվի ոչ մէնդէյ, ոչ սուգնայ, ոչ շուրց, ոչ գեբդ թէ հայնակ եւ ոչ մաճըրնակ եւ ոչ կրգալ» (45):

ՆԷՄԵՇ – հունգ. nemes.- ազնվական. «կան երնան շատ տուն նեմիշներ, որօնցմէ պէտք է փընտրելու, օր ցըցնուն» (197):

ՇՕԳՕՏՕԼ – հունգ. sokadalom.- տոնավաճառ, ամբոխ. «ե գիտացվի օր շօգօտօյին կլայ ծախելու հի վօվ, տարը շօգօտօյէն ինտան ամենեւին չի ծախէ (101). «նա ազատ ըլա աս երկրին մէջ ամէն դի ու ամէն անգամ ծախելու ու ալ իժով հիոր շօգօտօյները» (196):

ՉԻՔԳԱՅ – հունգ. csipke.- ժանյակ. «ամենեւին մէկ հագըղէղէնուն վերայ արծրթ ոսգու գարդարանքներ չի գրտվի, ոչ գիւղիւշ, ոչ չիբգայ, ոչ բօռդիշբան, ոչ բասամանդ, ոչ ֆրանձըլ» (45):

ՊՕՐ ՊԻՐՕ – հունգ. bor.- «գինի» + biro «դատավոր, գինեվաճառութեան դատավոր՝ հսկող». «գիտացվի, որ դրանք պօր պիրօվ զԱղաչայ Օվանէսն գրէջունի, օր սէպէրն առնու գրըչմանցն եւ չափէ ըզամաներն (105):

ՌՕՅԳ - հունգ. rojt.- ծոպ, վերջավոր. «նոր բան որ ալ լան ըլար եւ սրգըլամն

պիլայ շինօրէ առանց վիղիզ գիղիշ պիգտի բիգով մըն եւ չափաւոր ռոյոզվըն» (46):

ՍԵՐԳԸԼԱՊ – հունգ. szarka + láb.- որիի ոտք (շորի վրա կաշաղակի կամ ազ-
նավի ճանկերի նման կարված թել). «թէ հայնակ ու թէ մաճըրնակ եւ ոչ կըճգալնու
վերայ մէկ միայն ոսգու կամ արծըթէ շինօրն եւ սրբզըլապէն դուս» (45):

ՍԼՕՊՕԹ, ըսօսօթ – հունգ. szabad.- ազատութիւն, հրաման. «օզկանուն
ամենեւին ըսօսօտ չիլայ ծախելու, ոչ մէկ հայի մըն ալ» (100). «էրկուսու ու իրե-
քում օրը ամենեւին սօսօտ չէ ծախելու» (197):

ՍՈՒԳՆԱՅ - հունգ. szoknya.- կանանց շրջագետս. «ոչ այս երկրին մէջ եւ ոչ
օզկայ երկիր չի գրավի ոչ մէնդէյ, ոչ սուգնայ, ոչ շուրց, ոչ գեթթ թէ հայնակ եւ ոչ
մաճըրնակ եւ ոչ կրգալ» (45):

ՎԱԼՕՍ – հունգ. válasz.- պատասխան. «բանին վալօսն կու բովինք թագաւո-
րէն» (307):

ՎԱՏԲԱ - հունգ. veder.- դույլ, 10 լիտր. «գիտացվի օր տվանք ըզըրախին
արընտայօվ Աղաչայ Ծարուկին ասցուան, մէկ տարօվ, որ ինքը ծախէ գուրօվ ալ
եւ վատրայո՞վ ալ եւ ընդօր ուզենայ (100):

ՎԱՐՄԵԿԻԱ - հունգ. varmegye.- գավառ, կոմսութիւն. «երբ գրիմինալ բան
պատահի գօյգօյոյ վարմէկիայէն, ձէնէ Բ ասէսօր եւ նոցայ հետ զդատաստանը
կտրեն (67):

ՎԻԳԻՉ ԳԻԳԻԻՇ – հունգ. vitéz-kötés.- զինվորական հանգույց, հունգարա-
կան ազգային տարազի դետալ. «նոր բան որ ալ լան ըլար եւ սրգըլամն պիլայ շի-
նօրէ առանց վիղիզ գիղիշ պիգտի բիգով մըն եւ չափաւոր ռոյոզվըն» (46):

ՎԼԱՄԵԻ – հունգ. valasztmany.- ընտրված մարմին, ժողով բառի կըրնատ ձևն է.
«եղաւ ի քաղաքն Էլիզաբէդան վլասնի քաղքին հօդարին համար» (110):

ՎՕՐԱՇ – հունգ. varrás.- կար, կարվածք. «արծըթէ կամ ոսգու ասպրշէ վօրաշ
ալ չի տգվի» (46):

ՏՐԱՊ – հունգ. darab.- կտոր. «այսպէս եղաւ, որ տանք իրեն հրամանոցը
աշխատանքին մէկ տրապ մը տեղ խոտնոցէն» (106):

ՐԸԹ - հունգ. rét.- դաշտ, մարգագետին. «եւ ըզԱղաչայ Մանուկն Իսիգու-
ցեանց դըրանք վէքիլ ըրթին վրայ, այսինքն խոտանոցինը եւ լանցինը ըրթին բոլո-
րը» (105-106):

ՐՕՍԱ - ըստ Գ.Գովրիկյանի՝ հունգ. rasra.- մանգաղ. «ինչ թուրու փէշայի
ասպանք գա աս երկրին մէջ, ինչպէս՝ կայդընեղէն, գօտի, պումպեր, երկըթեղէն,
թավախակիւն, քօսա, վընադեղէն (°) և այլն» (196):

ՕԳԼՕԼՍՕԳՈՇԱԿ – հունգ. alkalmatosság.- առիթ, նպատակ. «նմանապէս
վասն օլգօլմօդոշակին, թէ ինչ կերպիւ երթան Աղաչայ տէրուդադուշներն պէջն,
ուրվեցաւ պատուելի հասարակն» (147):

ՕՊՐՈՒՉ - հունգ. abrosz.- ծածկոց, սփռոց. «նմանապէս օպրուզներն, բարձե-
րեքներն, սավներն որն որ ոսգօվ կամ արծըթօվ զարդարած կու գտվին, նայ
արգիլած պիլան» (46):

ՕՎՈՒՍ – ծան. հրատարակչի. վալախերեն է՝ վարսակ. «ոչ փոխ տայ մէկը
մէկալին, եւ ոչ ցորենի վրայ տայ կամ օվուսի, կամ խօտի, կամ ինչեւիցէ» (101):

ՕՏՕՐՊԻՐՈՎ – հունգ. udvar biró.- պալատական իրավասու, հագարապետ.
«սնտուկն պի կանի Ա Օհանին մօտ, եւ բալինքն պիլայ Աղաչայ օտօրպրովին
մօտ» (286):

ՖԵԼԻՍ – հունգ. félig.- կեսը, կիսով չափ. «որ ունենայ զկես ստակն գնածինը վար դրնելու ու անով ֆելիխ պի վճարվի եւ բարով վայելցնու» (357):

ՖԸԿԸԳՈՒԻԳ - ծ. հրատ. fogadni.- վարձու բռնել կամ կաշառել. «նայ էղաւ աղաչանուն հրամանովն, օր տան կամ ֆըկըրուիդ անին, որն որ արիլ ին 100 ոսգի, եփոր ծառութիւն անէ» (110):

ՖԻ ՊԻՐՈ – հունգ. fő biro.- գլխավոր դատավոր. «խնդրեցինք ... ըզՊատուելի Ղազան Օհանեանց եւ ֆի պիրով հայոց գումբանիայի, որ անձրներն արին իրենց հրամանքներն էրթալու ու աշխատելու ինչուան ի Պէչն» (117):

3. Եվրոպական այլ լեզուներից կատարված փոխառություններ

Տրանսիլվանիայի հայերի գրություններում հունգարերեն բառերն, անշուշտ, վերը բերվածով չեն սահմանափակվում, դրանց թվարկումը կարելի է շարունակել: Միաժամանակ՝ ներկայացված բառերին զուգահեռ, հրատարակված փաստաթղթերում կարելի է գտնել մի շարք բառեր, որոնք տեղի հայերի խոսվածքի մեջ են անցել ու արմատացել եվրոպական այլ լեզուներից, մի մասը՝ զուցե հունգարերենի միջնորդությամբ:

Որպես օրինակ ներկայացնենք հունգարահայերի գրություններից քաղված գերմաներեն, լատիներեն, ֆրանսերեն բառեր:

ԱՐԸՆՏԱԳՕՐ – լատ. arendator.- վարձառու. «գայնպիսին անպատճառ ունենայ ճուրում տալու ԺԲ մճրի. կեսն դըլնաճին ըլայ, կեսն արընտադօրինը ըլայ» (100):

ԳՐԷՔԻՆ – ֆրանս. crépine.- ծոպ, վերջավոր (բառարանները նաև այլ իմաստ են ցույց տալիս՝ «քամիչ»): «մմանապես ոչ էրիկ մարդիգաց ոչ կնտոց հագատի վրայ ոսգու կամ արծըթէ գրեքին չի գտվի» (46):

ՉԷԽ – գերմ. zeche.- արհեստավորական ընկերություն, միաբանություն. «աւուրը ամէն դի կամ ամէն շադրա կու քալին ձէխերը» (197):

ՇԴԻՐՆՖ - գերմ. strümpfe.- գանգապան, գուլպա. «օսգով կամ արծըթով շուխերն ապրշումէ շդրինֆներըն թէ տղայ կընտոց եւ թէ աղջիկնու եւ կամ հի որ մէկին արգիլված պիլայ» (46):

ՇՈՒԽ – գերմ. schuh.- հողաթափ⁹. «օսգով կամ արծըթով շուխերն ապրշումէ շդրինֆներըն թէ տղայ կընտոց եւ թէ աղջիկնու եւ կամ հի որ մէկին արգիլված պիլայ» (46):

ՇՈՒՐՑ – գերմ. schurz.- գոգնոց. «ոչ այս երկրին մէջ եւ ոչ օզկայ երկիր չի գըտվի ոչ մէնդէյ, ոչ սուզնայ, ոչ շուրց, ոչ գեբդ թէ հայնակ եւ ոչ մաճըրնակ եւ ոչ կրգալ» (45):

ՌԷՉՈԼՎԱԳ - լատին. resolvo.- արձակել, մերժել. «որ բանին վերայ խորհուրդ անելով ռէզօլվադ եղաւ Պատուելի Հասարակն, թէ տանք մինք ալ 500 ոսգի» (129):

ՖՐԱՆՉԸԼ - գերմ. franze.- ծոպք, վերջավորություն. «ամենեւին մէկ հագըսդէղէնուն վերայ արծըթէ ոսգու զարդարանքներ չի գըտվի, ոչ գիտիշ, ոչ չիբգայ, ոչ բօռդիշբան, ոչ բասամանդ, ոչ ֆրանձըլ» (45):

ՖԱՐՇԱՆԳ - գերմ. Fasching, հունգ. Farsang.- բարեկենդան, տոնախմբություն. «նայ ութվեցայ պատուելի աղաչանուն, որ տան տիլաճիայ հասարակութեան դէր այս գալ ֆարշանգիս ալ» (49):

Եվրոպական փոխառություններ են նաև՝
ուղղափառ **նօթար** (գրագիր),
գրե ու խրկե **բրեվիլեկիումինը**,
զաբիսն ալ ունին, այի գրե **զաբիսին** վրայ,
գրամպակն ալ տվանք **արընտայի**,
թե գինուն, թե **փիվին** (զարեջուր),
բրիսդավ օր ըլայ,
ինչ **զօնտիծիաներ** օր տրվի,
հասդատ կանելու այս **բունգդերուն**,
անքօվն գրած **բունգդերուն** համար,
ինշտանծիային համար,
զմեր հին **տիբլուման** նօրօգին,
զօնսէնսուսին չիլար,
զօնձէրդածիային դիմաց,
վասն **անդիծիբածիային**,
բունգդերուն հասդատութեան,
օպլիկօվադ էղան,
բիբլիգօվադ ընել,
հինկ հազար **զլօթ**,
զօնդրագդ տալու,
վօլնի պիլայ (ագատ պիտի լինի) և այլն:

4. Հունգարահայերի բարբառի հիմնական հատկանիշները

Որքան էլ շատ լինեն փոխառյալ բառերը հունգարահայերի բարբառում, միևնույն է՝ այն իր կառուցվածքով և հատկապես քերականությամբ ներկայացնում է հայերենի տարածքային մի տարբերակը: Այդպես է նաև Տրանսիլվանիայի հայերի խոսվածքի պարագայում, որում նկատելի յուրահատկությունների վրա փորձենք համառոտ կանգ առնել:

1. Նախ՝ հայերենի տարածքային այս տարբերակում զգալի է բաղաձայնների ձայնեղացման երևույթը: Հրատարակված փաստաթղթերի բոլոր էջերին սփռված են ձայնեղացած բաղաձայններ պարունակող բառերի օրինակներ. **ինչբէս, հաս-դատել, կորուսդ, դատասդան, ըսդակ, ըսդրագրեցանք, ոսգի, կտրջորաց** (կտրիճներին), **դպջեր** (դիպչեր) և այլն: Հնչյունական այս երևույթը տարածվում է նաև փոխառյալ բառերի վրա՝ **տէբուդադ, բրօդօգօլ, բրիսդավ, նաձիօն, էզօնօմիա, մա-կիսդրադ, Գէրէզա** և այլն: Խոլ բաղաձայններից բացի ձայնեղում են նաև շնչեղ-խուլերը, ինչպես՝ **իրիձգին, ճարագայդ, դաշդ, գիտածվի, դպջեր, ամէն շաբդու** և այլն: Մակավ դէպքերում հանդիպում են նաև ձայնեղ բաղաձայնների խլացման օրինակներ՝ **հինկ, կէներալ**, որոնք, սակայն, ընդհանուր օրինաչափությունից դուրս են:

2. Խիստ տարածված է փափուկ **ր**-ի գործածությունը թե՛ **ն**-ին նախորդող դիրքում, թե՛ այլ դիրքերում, օրինակ՝ դա**ր**նալ, բ**ր**նել, ա**ր**նել, ձէ**ր**նոց, ա**ր**անց, խա**ր**ը, անպատճա**ր**, ծա**ր**ութիւն (ծառայություն), ա**ր**աքելական, հե**ր**ի (հեռու), ա**ր**ուտուր և այլն:

3. Բառասկզբում գրաբարի **n**-ն շատ բառերում փոխվել է **o՝ օջ, օվ, օսգի, Օվա-**նես, ինչ**օր** և այլն:

4. Լինելով «**կը**» ճյուղի բարբառային միավոր՝ մեր քննած գրություններում շատ են հանդիպում **կու** մասնիկով ներկայի կազմություններ՝ կու քալէ, կու գրվի, կու լսիմ և այլն: Բայց դրան զուգահեռ հավասարապես գործածվում է նաև **կի** մասնիկը, ինչպես՝ կի կարավարին, կի քալէ, կի տեսնունք: Այս հարցում օրինաչափություն չի նկատվում, թե հատկապես որ դեպքերում է գործածվում **կու** կամ **կի**: Հաճախ միևնույն նախադասության մեջ են հանդիպում երկու մասնիկները զուգահեռաբար, օրինակ՝ «ամէներեսնս **կու** խոստանանք մէկմէկի ու **կի** կապվիմք մեր ձերնագրովն ու մօհրովն» (95)

5. Ներգոյական առանձին հոլովածն չի հանդիպում, բացի մի քանի թվականներից՝ ատուրն էրկուսում, իրէքում, որոնք դասական թվականի արժեք ունեն:

6. Վաղակատարը կազմվում է **-իլ** մասնիկով՝ քալիլ է, գնացիլ է, հանիլ է և այլն:

7. Խոսվածքին բնորոշ քերականական մասնիկներից են՝ պի (պիտի - պիլար, պի ունենան, պի գար, չի պի կարենան, պիտոր, պ՛ունէնար), զէ (զի), եփօր, վօվ, վօվօր, հի վօվ (ամեն մեկը), հի օր (որևէ մեկը), մէկնիվօր (որևէ մեկը):

8. Քիչ չեն նաև զուտ բարբառային բառերը: Օրինակ՝ 19-րդ դարի կեսերին ապրած Քուրթի (քաղաք Գալիցիայում, որը 1715 թ. հիմնել են հայերը) մի հայի խոսքում պահպանվել են մի շարք բառեր, որոնք հատուկ էին տեղի բարբառին.

ԻԼԱԽԱՆՔ – լեհերեն. «սորվիլ իմ իլախանաք, հեն (նաև) ալամանաք (գերմաներեն)» (էջ 209):

ՕՉԳԱՅ – ուրիշ. «ան ժամանակ մեր հաւք (պապերը) օզգայ փեշա չէին բանի» (209):

ԾԱՌՈՒԹԻԻՆ – ծառայութիւն. «էղիլ իմ տաւերկու տարի, ծառութիւն արիլ իմ մեր Քուրթու բազրգըննու (վաճառականների) մօտ» (209):

ԱՂԻՌԻԼ - ճամփա գնալ, ուղևորվել. «եսքը աղտրիլ իմ կօլիօ (երկաթուղի) դէպի Օսվինցանա, աղտրիլ իմք Վարշաւ» (210)¹²:

Նշված բառերը բացակայում են վերջերս հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարանից», այսինքն՝ վստահաբար բարբառային նորակազմություններ են, որոնք առաջացել են հունգարահայերի բարբառում: Է՛լ ավելի շատ բառեր կան ուշ միջնադարի հունգարահայերի գրավոր աղբյուրներում, որոնք, որքան մեզ է հայտնի, լեզվական առանձին քննության չեն ենթարկվել, ուրեմն և՛ բարբառային բառերը չեն արձանագրվել ու քննվել: Ստորև ներկայացնում ենք Տրանսիլվանիայի հայերի 17-18-րդ դդ. բարբառային բառերի մի փունջ.

ԱՌԱՉ ՏԱԼ – առաջարկել, խնդիր ներկայացնել. «դարձեալ առաջ տվիմ վերոյգրեալ Աղաչայ տէրուդադուշներն» (155):

ԸՆԿԵՐԵԼ – օգնել, աջակցել. «հելլէտ ուզեր մէկ սումամն ըսդակ շահու հասարակէն, որ ընկէրէր հասարակն զկրօֆն (գրաֆ՝ կոմս)» (155):

ԹԱՓԼՎԻԼ – ըստ Գ.Գովրիկյանի՝ հրաժարվել. «լսիլ է պ. պրաստավան, թէ կու թափլվիմ ֆունտադօրութենէ» (252):

ԽՈՒԾԱԾ – ըստ Գ.Գովրիկյանի՝ չար, գեշ. «հաւանութիւն տվիլ է հասարակիմ խորհրդիմ. գէրայ հասարակն խուծած խորհուրդ արած ըլար նայ, գրած պիլեր թէ

12 Այս բառերը քաղել ենք՝ **Լեւոն Բաբայեան**, Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), Թիֆլիս, 1911 թ. աշխատությունից:

չի անինք» (234):

ԾԷԾԷԼՈՒԹԻՒՆ – պատերազմ. «մինք ալ մեր կարօղութեանը գօրայ ընկերութիւն տանք մեր թագուհոյն, ունենալով ծէծէլութիւն հետ Բրուսին (Պրուսիային-Ն.Պ.)» (129):

ԿԸՉԳԱԼ – կրծկալ. «թէ հայնակ ու թէ մաճըրնակ եւ ոչ կըճգալնու վերայ մէկ միայն ոսգու կամ արծըթէ շինօրն եւ սրըզլապէն դուս» (45):

ԿՕՃԿԵԼ – վերջացնել, լրացնել, ավարտին հասցնել. «խորհուրդ անինք եւ տեսնունք, թէ ինչխտար ըսդակ պի կարէնանք ունենալու..., որ հօն հասդատ բան կօճկըվի» (134):

ՀԷԾԷԼՈՒԹԻՒՆ – պատերազմ. «հէծէլութեան աստենները կամ Աստուած հերի անէ, մէկ գօր փախ մը ըլար» (195):

ՃՈՒՅԳ - գույգ, ջուխտ. «հախն պիլայ վեց ոսգի եւ մէկ ջուֆդ կօշիկ» (147):

ՄԱՃԸՐՆԱԿ – մաճարացի, հունգար. «թէ հայնակ ու թէ մաճըրնակ եւ ոչ կըճգալնու վերայ մէկ միայն ոսգու կամ արծըթէ շինօրն եւ սրըզլապէն դուս» (45):

ՈՒՅՄԻՇՎԵԼ – մտածել, խորհել. «սղըկին սէպն այնպէս ույմիշվեցանք, թէ հի որ մէէկին վրայ ինչօր ըններ, նայ ամէն մէկն պարտ ունենայ» (134):

ՊԻՏՎԱԿԱՆ – պիտանի, անհրաժեշտ. «գիտինք օր ան ալ պի բանիք ու աս ալ պիտվական է» (195):

ՔԱԼՅԸՆԵԼ - գործածել, կրել. «օսգով արծըթով լալէխներն թէ փեսութեան, թէ վզի որ կու գտվի, նայ արգիլված պիլան որ ամենեւին ըսլօպօտ չիլայ քալցընելու կամ հագնելու» (46):

Եզրակացութիւն

Ի՞նչ կարելի է ասել ուշ միջնադարում Հունգարիայի տարածքում հանգրվանած հայերի խոսվածքի ու նաև բառապաշարի մասին: Նախ՝ փոխառյալ բառերից յուրաքանչյուրն իր մեջ խտացնում է տնտեսական, իրավական, կենցաղային որոշակի իրողություն: Այդ դիրքերից նայելիս մեր համառոտ քննությունն ի հայտ է բերում, որ տասնամյակներ շարունակ Հունգարիայի տնտեսական ու մշակութային դաշտում ապրելու, հայերի մյուս հատվածների հետ սերտ շփումներ չունենալու և համեմատաբար փակ լեզվական միջավայրում գործելու հետևանքով հունգարահայերի խոսվածքում ձևավորվել էր եվրոպական փոխառությունների մի սովոր խումբ, որոնք հայերենի մյուս հատվածներում չեն հանդիպում: Գրանք առօրյա գործածական բառեր էին, հիմնականում՝ արհեստագործությանը, հագուստեղենին, իրավական ու տնտեսական ոլորտներին վերաբերող եզրույթներ կամ հասկացություններ, որոնց հայերեն համարժեքները ստեղծելու կարիք տեղի հայերը չունեին, ճիշտ այնպես, ինչպես թուրքերեն կամ պարսկերեն բառեր էին առատորեն փոխառվում համապատասխանաբար՝ Կ.Պոլսի ու Նոր Ջուղայի բարբառներում:

Ուշ միջնադարում եվրոպական միջավայրում հայերը փոխառությունների միջոցով շատ հանգիստ կարողացել են բարելավել հաղորդակցության խնդիրը: Թերևս դա էլ որոշ չափով նպաստող գործոն է եղել, որ հայերն արագ կարողացել են ինտեգրվել համապատասխան միջավայրում՝ նպաստելով տվյալ երկրի, այս դեպքում՝ Հունգարիայի տնտեսական զարգացմանը: Բավական է ասել, որ Հուն-

գարիայում հայերն այս շրջանում ունեցել են բարձր արհեստագործական համբավ, նաև տվել են պետական գործիչներ, միայն Եղիսաբեթուպոլիսում 18-19-րդ դարերում նշանակվել են ազգությամբ հայ 61 քաղաքապետեր:

Ու չնայած փոխառյալ բառերի ստվար թվին, մինևույն է՝ 17-18-րդ դարերի հունգարահայերի դիվանական փաստաթղթերը հայերենի արևմտյան ճյուղավորմանը պատկանող մի բարբառն են ներկայացնում՝ իրեն հատուկ քերականությամբ, հնչյունական կազմով: Այսինքն՝ հունգարահայերը, ավելի լայն իմաստով՝ ուշ միջնադարում Հունգարիայի կազմի մեջ մտնող երկրամասերում հաստատված հայերը, պահպանել էին արևմտահայ խոսվածքներին հատուկ առանձնահատկությունները: Նրանք սերում էին տարբեր վայրերից՝ Անի, Փոքր Ասիա, Կ.Պոլիս, ավելի ուշ՝ Մոլդովա: Ուստի այդ վայրերից եկած հայերի խոսվածքների ձուլումն առաջ բերեց մի բարբառ՝ հունգարահայ բարբառը, որն ուներ արևմտահայ բարբառներին բնորոշ հիմնական հատկանիշները:

Վերջում պետք է նշել, որ վաղաշխարհաբարյան հայերենի գրավոր հուշարձանների քննությանը նվիրված ուսումնասիրությունների թիվը վերջին շրջանում մեծացել է: Նման մի քննություն է կատարել հայագետ, Հայաստանում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն¹³: Նա Կամենեց-Պոդոլսկ քաղաքի երբեմնի հայ գաղթօջախում ստեղծված հայերեն բնագրերում մատնացույց է արել մի շարք փոխառյալ բառեր, որոնց ակունքը, հեղինակի համոզմամբ, ուկրաիներենն է: Նման բառեր են, օրինակ՝ **պեղքա** (օջախ), **բիվե** (գարեջուր), **թորպայ** (տոպրակ), **քորչմա** (պանդոկ) և այլն: Ա.Բոժկոն իր հոդվածում շեշտում է «վավերագրերի լեզվի առաջադրած խնդրի բարդությունն ու բազմապլանայնությունը»¹⁴: Նույնը պետք է ասել նաև հունգարական միջավայրում ստեղծված հայերեն բնագրերի լեզվի մասին:

Կարծում ենք՝ լեզվաբանական նման հետազոտությունները հարկավոր է շարունակել՝ այն նպատակադրությամբ, որ տվյալ թեմայի քննությունը որոշակի նպաստ է բերում հայերենի պատմության, բարբառագիտության, աշխարհաբարի կազմավորման, ինչպես նաև հայ-եվրոպական լեզվական, տնտեսական, մշակութային փոխհարաբերությունների պարզաբանմանը:

Summary

ARMENIAN-HUNGARIAN DIALECT IN THE 17-18TH CENTURIES

Lexical and grammatical review

Norayr B. Poghosyan

The article is devoted to the linguistic relationship between Armenian and Hungarian. Armenians have settled in Hungary since the X-XI centuries. In the late Middle Ages (17-18 centuries) Armenians gained economic and judicial autocracy in Hungary;

13 Տե՛ս **Օլեքսանդր Բոժկո**, Ուկրաինաբանությունները Կամյանեց-Պոդիլսկ քաղաքի XVI-XVII դարերի հայկական դատարանի վավերագրերի լեզվում, «Պատմա-բանասիրական հանդես», 2010, N 1, էջ 110-115:

14 **Օլեքսանդր Բոժկո**, նշվ. աշխ., էջ 114:

many archival documents were later published. Grigor Govrikyan, for example, published many archival documents of Transylvanian Armenians. Leaning upon these documents, the author of this article illustrates that Hungarian-Armenians utilized many European words in their language. Among them, Hungarian ones constitute a great number, e.g. **guba** (wine store), **lants** (chain), **nemish** (nobleman), **chibgay** (lace), **valos** (reponse), etc.

Other European loan words as well as the characteristic features of the dialect of Armenian- Hungarians are also discussed in the article.